Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ежедневный справочник

Ученого-рыбака

16397

361
Е-40

Ш. Р. Ш.

2002

2010

36235-66

50228-42

410
1915 № 682
217

Իսկականի վրա գրուած է՝ ընկերութիւնների և միութիւնների Բագուայ նահանգային ատեանի որոշմամբ մտցրուած է 1914 թ. ապրիլի 25-ին ընկերութիւնների № 83 րէէստրը:

Բագուայ Քաղաքապետի ժամանակաւոր պաշտօնակատար Ի. Ումանցեվ:

BIBLIOTH. MUS. ASIAT. C. A. 1818
Библиотека Института востоковедения Академии Наук СССР

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԱՅ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. Ընկերութեան նպատակը, գործունէութեան ասպարէզը եւ միջոցները:

§ 1.

Բագուայ որբախնամ ընկերութեան նպատակն է խնամել և կրթութիւն տալ երկսեռ որբ և չքաւոր երեխաներին, մինչև 18 տարեկան հասակը՝ առանց ազգի և կրօնի խտրութեան։

§ 2.

Ընկերութեան գործունէութեան ասպարէզը թէ Բագուի նահանգը և թէ ամբողջ Կովկասն է։

361
Բ-40

§ 3.

Ընկերութեան գործունէութեան կերպը հետևեալն է.

Որբ և չքաւոր երեխաների ծանր դրութիւնը թեթևացնելու համար ընկերութիւնը հիմնում է Կովկասի տահմաններում որբանոցներ։

§ 4.

Տալով իր սաներին բնակարան, սպրուստ, դասական պիտոյքներ և հագուստ, որբանոցը

ա. Սովորեցնում է նրանց գրագիտութիւն, տարրական գիտութիւններ, ամեն տեսակ արհեստներ, տնտեսութիւն, տնայնագործութիւն, գիւղատնտեսական գործնական գիտելիքներ և ընդհանրապէս յանրօգուտ գործեր։

բ. Հոգս է տանում իր սաների ֆիզիքական և բարոյական կրթութեան մասին. նմանապէս հոգս է տանում որբանոցից դուրս գնացող սաների ապագայի մասին։

գ. Որբանոցին իրաւունք է տրվում ունենալ առանձին բնակարան և ընդունել

Восточное Отделение
Академии Наук
СССР

իր արհեստանոցները նոյնպէս չափահաս անգործներին։

Ծանօթ. Մինչև սեփական արհեստանոցներ ունենալը որբանոցն իրաւունք ունի իր սաներին տեղաւորել այնտեղի արհեստանոցներում և դպրոցներում, ուր որ բացված է որբանոցը։

§ 5.

Երեխաները որբանոցը ընդունվում են վարչութեան հայեցողութեամբ։ Ընդունելութեան ժամանակ գերադասութիւն է տրւում որբերին և կիսաորբերին ու ապա չքաւոր ծնողների զաւակներին։

§ 6.

Որբանոց ընդունվում են բացի գիշերօթիկներից և երթևեկներ, որոնք չեն սաանում հագուստ, կօշիկ և դասական պիտոյքներ։

§ 7.

Վարչութեան հայեցողութեամբ ընդունվում են և թոշակաւոր սաներ։

Ծանօթ. Վճարի չափը որոշում է ընդհանուր ժողովը։

§ 8.

Սաների ընդունելութիւնը և հեռացնելը կախված է վարչութիւնից։

Բ. Ընկերութեան կազմը։

§ 9.

Ընկերութիւնը կազմվում է հիմնադիր անդամներից, որ են Ալէքսանդր Գեւորգեան Թառայեանց, Անդրէյ Ֆերոբեան Թառայեանց, Պատուական Գալստեան Թառայեանց, որ բնակվում են Բագու Վոդավօզնայա փողոց № 19, Յարութիւն Յակոբեան Մելքումեանց, Սանխալավսկայա № 47 և անսահման թւով երկսեռ անդամներից ամեն դասակարգից։

§ 10.

Ընկերութեան անդամ լինել ցանկացողները ընդունվում են վարչութեան կողմից։

Ծանօթ. *Անդամներ ընդունելիս պէտք է նկատի առնվին մարտի 4-ին 1906 Բարձրագոյն հաստատված ընկերութիւնների և միութիւնների վերաբերեալ ժամանակաւոր կանոնների 7, 8 և 9 յօդ.*

50228-ահ
ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
36295-6

§ 11.

Ընկերութեան իսկական անդամները վճարում են տարեկան ամենաքիչը 6 ր. կամ միանուագ 150 ր. անդամ ընդունվելու միջոցին, իսկ ապագայում յունվար 1-ին, և առանում անդորրագիր ընկերութեան գանձապահից։

§ 12.

Ով որ տարուայ ընթացքում չի վճարի անդամավճարը՝ համարվում է անդամութիւնից դուրս բերված։

§ 13.

Եթէ մէկ անդամի վարմունքը չի համապատասխանում ընկերութեան շահերին՝ նա կարող է դուրս բերվել ընկերութիւնից ընդհանուր ժողովի կարգադրութեամբ։

§ 14.

Ընկերութեան վարչութիւնը կազմվում է եօթը հոգուց. չորս հիմնադիր և երեք ընկերութեան անդամներից, որոնց ընդհանուր ժողովն է ընտրում. և վարչութիւնը իր միջից ընտրում է նախագահ, գանձապահ և քարտուղար։

§ 15.

Հիմնադիրներից բացի վարչութեան անդամներ ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից գաղտնի գրաւոր քուէարկութեամբ մէկ տարի ժամանակով՝ երեք անդամներ և երեք կանդիդատներ՝ լրացնելու պակասը վարչութեան դուրս եկող անդամների և հիմնադիր անդամների։

§ 16.

Վարչութիւնը կառավարում է ընկերութեան գործերը, նրա կայքը՝ ընդհանուր ժողովի կարգադրութեան և որոշումների սահմաններում։

§ 17.

Վարչութեան տեղը Բաթումն է Վադավօզնայա № 19, Ա. Գ. Թառայեանի տանը։

§ 18.

Վարչութիւնը ամեն տարի յունվարին նշանակում է ընդհանուր ժողով, որի համար ուղարկում է հրաւէրներ։

§ 19.

Ընդհանուր ժողովն է ընկերութեան

օրէնսդիր մարմինը, որը քննում և որոշում է նրա ամեն գործերը, հսկում է ընկերութեան կայքի, միջոցների և վարչութեան գործունէութեան վրա։

§ 20.

Եվ ու մուտքի հաշիւները գանվում են Վարչութեան ձեռքում, որը տարեկան հաշիւը ներկայացնում է ընդհանուր ժողովին մինչև յունվար ամիսը։

§ 21.

Ընկերութեան միջոցները կազմում են

ա. Անդամական վճարներ։

բ. Կամաւոր նուէրներ՝ կանխիկ դրամով, արժէքաւոր թղթերով և իրերով։

գ. Յօգուտ ընկերութեան կատարած գումարներն ու կայքերը։

դ. Նպաստներ մասնաւոր անհատներից և հասարակական հիմնարկութիւններից։

ե. Որքանոցի կազմած աշխատանքների վաճառումից և թոշակաւոր սանների վարձից։

7176

գ. Ընկերութեան անշարժ կայքերից ստացած եկամուտները:

§ 22.

Ընկերութեան կանոնադրութիւնը կարելի է փոփոխութեան ենթարկել նրա անդամների ընդհանուր ժողովի կողմից, համաձայն Մարտի 4-ին 1906 Բարձր. հաստատված ընկ. և միութիւնների վերաբերեալ ժամանակաւոր կանոնների 27 յօդ.

Института Востоковедения Академия Наук СССР

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

361
Բ-40

2013